14.05.2025թ.

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Դավիթ Խուդաթյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am

Հարգելի պարոն *Խուդաթյան,*

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում 2024թ. մայիսի 22-ին փոփոխություն է կատարվել, ըստ որի՝ համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ զբաղեցնել պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնը: Համայնքներում ավագանու անդամները դեռ շարունակում են համատեղել այդ պաշտոնները: «Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Օրենքի վերը նշված փոփոխությունից հետո քանի՞ ավագանու անդամի դեպքում է անհամատեղելիության պահանջ առաջացել: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ մարզերի և համայնքների:***

2. Օրենքի վերը նշված փոփոխությունից հետո քանի՞ ավագանու անդամի լիազորություն է դադարեցվել: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ մարզերի և համայնքների:***

3. Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում անհամատեղելիության պահանջները խախտած ավագանու անդամների լիազորությունները դադարեցնելու ուղղությամբ:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան